# ԴԱՍԻ ՊԼԱՆ

| Առարկա՝ Հայոց պատմություն | | Ուսուցիչ՝ Գայանե Կարախանյան / Կոտայքի մարզի Ջրվեժի միջնակարգ դպրոց/ |
|---|---|---|
| Դասարան՝ 7-րդ | Ամսաթիվ | 19.02.24 |
| Թեմա 5. Հայաստանը Պարսկաստանի, Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության միջև: | ԴԱՍ 5.1. Պայքար ինքնավարության համար. Վարդանանց պատերազմը և Ավարայրի ճակատամարտը, էջ 130-131 | |
| Դասի նպատակը | • Ներկայացնել Վարդանանց պատերազմի առանցային դրվագները<br>• Բնութագրել Վարդանանց պատերազմի ակնառու գործիչների գործունեությունը<br>• Բացահայտել ազգային-ազատագրական պայքարի արդյունքները՝ կարևորելով համաժողովրդական միասնական պայքարի նշանակությունը | |
| Դասի վերջնարդյունքները | • Ներկայացնի Վարդանանց պատերազմի առանցային դրվագները<br>• Բնութագրի և համեմատի Վարդանանց պատերազմի ակնառու գործիչների գործունեությունը<br>• Գնահատի ազգային-ազատագրական պայքարի արդյունքները՝ կարևորելով համաժողովրդական միասնական պայքարի նշանակությունը | |
| Դասի խնդիրները | • Նպաստել սովորողների համեմատելու և արժևորելու կարողությունների<br>• Նպաստել սովորողների քննադատական մտածողության զարգացմանը | |
| Միջառարկայական կապեր | Համաշխարհային պատմություն, աշխարհագրություն, հասարակագիտություն, հայոց լեզու, արվեստ | |
| Կապը ՀՊՉ-ի հետ | Հ 1, Հ 2, Հ 15, Հ 16, Հ 25, Հ 29, Հ 30, Հ 31, Հ 35, Հ 44 | |
| Դասի սկիզբը | Կազմակերպչական մաս /2 ր/ | |

| | |
|---|---|
| *(նշել կիրառվող մեթոդները, տևողությունը, ռեսուրսները)* | **Հին դասի հարցում** /ֆրոնտալ հարցերի և ժամանակի ժապավենի միջոցով/:<br><br>1.Ե՞րբ է անկում ապրել Արշակունյաց թագավորությունը:<br>2. Ի՞նչ վարչական միավոր ստեղծվեց Արևելյան Հայաստանում Արշակունյաց թագավորության անկումից հետո:<br>3. Ո՞ւմ կողմից էին նշանակվում մարզպանները:<br>4. Ո՞ր փաստերն են վկայում, որ ի տարբերություն մյուս մարզպանությունների՝ Հայաստանն օժտված էր ավելի մեծ իրավունքներով:<br>5. Ինչպե՞ս էր Հազկերտը փորձում թուլացնել Հայաստանի ռազմական հզորությունը: Ի՞նչ քայլեր ձեռնարկեց պարսից արքան իր նպատակին հասնելու համար:<br>• 428 թ.<br>• 447 թ.<br>• 449 թ. |

| | |
|---|---|
| Հիմնական մաս<br><br>*(նշել կիրառվող մեթոդները, տևողությունը, ռեսուրսները)* | **Դիտել տեսանյութը՝** https://www.youtube.com/watch?v=qOXA5y7JE_8<br><br> |
| Ամփոփում<br><br>*(նշել կիրառվող մեթոդները, տևողությունը, ռեսուրսները)* | Գիտելիքների բուրգ.<br><br> |
| | |

| | |
|---|---|
| Տնային աշխատանք | • Համեմատե՛ք Վարդան Մամիկոնյանի և Վասակ Սյունու դիրքորոշումը ապստամբության պահին:<br>• Կատարե՛ք էջ 134-ի ԱՅ-ի 3-րդ առաջադրանքը<br>• **Լրացրե՛ք միտքը.** «Այս թեմայից ինձ համար ամենակարևորն այն էր, որ …»:<br>• «Ինձ զարմացրեց……»: |